

նալի աչքերը, ուր մեր ժողովուրդին անհուն, անմար, անմոռանալի տառապանքը կը բխէր ու կը բխէր, դարձեալ անսպառ քաղցրութեամբ մը: Ու բոլոր տարագները, որոնք անհաւատալի քաղաքակրթութիւններէ վկայութիւն կը դառնան: Կովկասը ցեղերու խառնարան, ըզզեստներու կենդանի թանգարան մըն էր եւ է: Ու այդ մարդերը, այդ զէնքերուն ու հանդերձանքներուն մէջ, պատերու վրայ արձանագրուած աշխարհ մը խռովքի, կարծր լեռնաշղթայ գրկանքներու, ու ծով-ծով արիւն: Մաթիկ նմանցուց լուսանկարը սեւ թերթ մը այրուած մետաղի, որ մեր գործերուն ու անունին հարազատ տապանաքար մըն է, քան մարմար:

Վերնատունի ներքին, աչքէ անյայտ խորշի մը մէջ ճռինչը ծղրիթին, որ տպագրական պզտիկ մամուլը կը փոխադրէր Մաթիկի բերնին: Ընկեր Մաթիկը չէր զիջաներ տեսնել արտաքին աշխարհը, եթէ անմիջական կամ հեռաւոր, անխուսափելի, առնուազն կարելի օգուտ մը չընծայէր զայն շահագրգիռ, - արեւելահայ օգտապաշտութեան հետ հաւասար ներկայացուցիչ: Բայց ահա աւելին: Արտաքին աշխարհին հանդէպ սա շահագրգիռ կեցուածքը անբաւական էր մնացած՝ հակակշռելու ներքին աշխարհին համար անոր անհուն տրամադրութիւնը: Կ'ապրէր աճապարանքին տակը ներքին իր անձնաւորութեան, որ սաստիկ իրերէն, իրողութիւններէն իր խորշանքը, սարսափ կը սիրէր տարածել անպարագիծ, չունենալու չափ որեւէ նայուածք, թէ կողզ փափուկ, գեղեցիկ, բայց ոչ-օգտաւէտ բաներու վրայ: Ի՞րը: Տինամիք աշխարհն էր իմաստին, զոր կը հաւատար օր մը իրագործըլելիք դրութեան մը յաղթանակին: Տարրերուն աշխարհին մէջ բան չէր կրնար կորսուել: Մաթիկին համար փառաւոր այդ տարագը, ուր կար փոխուած բառ մը սակայն: Իմաստները անմահ են անշուշտ... Պղատոնէն ի վեր: Ուրեմն ամէն ինչ յաղագս իմաստին, երբեք ինքը՝ իրեն համար: Շուրջը նայելու իր ոչ-զիջումն էր պատճառ, որ լման աշխարհ մը իր աչքերէն ըլլար վրիպած: Որ իր